ԴԱՍ 4.
Հիսուսի արյունը

Ներածություն

Բանալի համարներ

ՄԱՍ 4.1 Ինչ է անում Հիսուսի արյունը մեզ համար

ՄԱՍ 4.2 Ինչու արյունը

ՄԱՍ 4.3 Հիսուսի արյունը մեր ամենօրյա կյանքում ազդեցություն ունի

Աստվածաշնչյան ուսումնասիրություն

Աշակերտության ճանապարհը

Նշումների համար

Ներածություն

Մեղքից ազատ լինելու մեր սեփական ցանկությունը բավարար չէր լինի: Աստված մեզ պետք է ետ գներ Սատանայի իշխանությունից: Այդ պատճառով Նա Իր Որդուն տվեց որպես ***Փրկիչ***:

> *«Նրա անունը Հիսուս կդնես, որովհետև Նա կփրկի Իր ժողովրդին իրենց մեղքերից»* (Մատթ.1:21):

Հիսուս Քրիստոսի արյան միջոցով Աստված շնորհեց մեզ.

- Ներում:
- Ազատագրում մեղքի և մահվան իշխանությունից:
- Ազատագրում Սատանայի իշխանությունից:

Այս բաժինը կներկայացնի Աստծո ազատագրող զորության վիթխարի նշանակությունը:

Բանալի համարներ

Նշումների համար

Հովհ. 6:53–57
Ա Հովհ. 1:7
Եբր. 9:11–28
Դևտ. 17:11
Ա Պետ. 1:18–20
Ել. 12:12–13, 21–23

ՄԱՍ 4.1
Ինչ է անում Հիսուսի արյունը մեզ համար

- Հիսուսի արյան միջոցով մենք ստացել ենք փրկություն՝ փրկվել ենք Սատանայի իշխանությունից (Մատթ. 1:21, Եփես. 1:7, Եբր. 9:12):
- Հիսուսի արյան միջոցով մեր բոլոր մեղքերը ներված են, երբ խոստովանում ենք դրանք: Եթե Հիսուսի հետ քայլում ենք լույսի մեջ, Նրա արյունը շարունակաբար մաքրում է մեզ մեր բոլոր մեղքերից (Ա Հովհ. 1:7–9):
- Հիսուսի արյան միջոցով արդարացվում ենք, դառնում արդար. այնպես, որ կարծես երբեք մեղք չենք գործել: Նա մեզ Իր արդարությունն է հագցնում (Ես. 61:10, Բ Կորնթ. 5:21): Հիսուսի արյունը բավարարում է Աստծո սրբության պահանջները և խաղաղության ուխտ կնքում նրանց հետ, ովքեր վստահում են Իրեն (Կող. 1:20):
- Հիսուսի արյան շնորհիվ կարող ենք մտնել Աստծո ներկայության մեջ, ցանկացած կարիքի ժամանակ ստանալ Նրա ողորմությունն ու աջակցությունը (Եբր. 4:14–16, 10:19–20):
- Հիսուսի արյան միջոցով մենք մաքրագործվում ենք, սրբվում և զատվում Աստծո համար (Եբր. 13:12):
- Հիսուսի արյան միջոցով մեր խիղճը մաքրվում է բոլոր մեղքերից, և մեր մարմնի, հոգու և շնչի մեջ ազատ ենք ծառայելու Տիրոջը (Եբր. 9:14, Բ Տիմ. 1:7):
- Գառնուկի արյամբ և մեր վկայության Խոսքի միջոցով ունենում ենք հաղթություն Սատանայի հանդեպ (Հայտ. 12:11):

Նշումների համար

ՄԱՍ 4.2
Ինչու արյունը

Հին Կտակարանի օրերում քահանայապետը տարին մեկ անգամ Իսրայելի գործած բոլոր մեղքերի թողության համար զոհված կենդանու արյունով մտնում էր Սրբության Սրբոցը, որտեղ դրված էր Ուխտի Տապանակը՝ Աստծո ներկայության խորհրդանիշը: Սա Աստծո հետ հաշտեցման ժամանակավոր միջոց էր Իսրայելի գործած բոլոր մեղքերի համար, որոնք կատարվել էին նախորդ տարում:

Ղևտ. 17:11–ը բացատրում է արյան կարևորության մասին.

> *«Որովհետև մարմնի հոգին արյունումն է. և ես ձեզ տվի այն, որ սեղանի վրա ձեր հոգիների համար քավություն անեք, որովհետև արյունն է, որ քավություն է անում իրենում եղող հոգով»:*

Այստեղ երկու կարևոր կետ կա.

1. Զոհի արյունը աստվածային նախախնամություն էր (Աստված այն ապահովել էր). *«Ես տվի այն ձեզ համար»*:
2. Զոհի արյունը գին վճարելու գործողություն էր: Մեղքը խնդիրն է, իսկ արյունը՝ փրկագինը:

Հիսուս Քրիստոսը եկավ որպես անմեղ մի զոհ, թափեց Իր արյունը և տվեց կյանքը, որպեսզի բոլոր նրանք, ովքեր հավատան Իրեն և դավանեն որպես Տեր ու Փրկիչ, չմեռնեն իրենց մեղքերի պատճառով: Իր խաչի մահով Նա ճանապարհ պատրաստեց մեր մեղքերի թողության և մաքրվելու համար և փրկագինը վճարեց հավիտենական փրկության համար (Բ Կորնթ. 5:17):

Որպես Աստծո կողմից մարդկանց համար սահմանված փրկագին՝ Նա այս արեց միայն մեկ անգամ: Աստված հռչակել էր մեղքի պատիժը՝ մահ: Հետո Նա ինքը վճարեց փրկագինը: Անմեղ կյանքը վերցվեց մեղավոր կյանքի փոխարեն, և ազատության մեջ ապահովվեց նոր կյանք բոլոր նրանց համար, ովքեր կատարվածը ընդունում են հավատքով.

> ***«Մահը ընկղմվեց հաղթության մեջ»*** (Ա Կորնթ. 15:54):

Երբ մենք ընդունենք Հիսուսին որպես Տեր և Փրկիչ, ապա դրանից հետո միայն կարող ենք մասնակից լինել կատարվածին՝ ազատվել խավարի իշխանությունից և մտնել Աստծո թագավորության մեջ:

Հիսուսն ասաց. «***Կատարվեց***» (Հովհ. 19:30):

Սա պարտության աղաղակ չէր, այլ հաղթության հռչակում: ***Կատարվեց***...

Նշումների համար

Նշումների համար

ՄԱՍ 4.3
Հիսուսի արյունը մեր ամենօրյա

Նշումների համար

Աստվածաշնչյան ուսումնասիրություն *Աշակերտության ճանապարհը*

Երբ Հիսուսը երկրի վրա էր, ցույց տվեց աշակերտության կարևորությունը: Նա 3,5 տարվա ընթացքում կրթեց իր աշակերտներին: Հիսուսը պատրաստեց ***հասրատուն հետևորդներ***.

- Նա ընտրեց և զորացրեց նրանց:
- Նա ուսուցանեց նրանց արքայության սկզբունքները:
- Նա դրեց իր կյանքը Գողգոթայի խաչի վրա:

Այս ուսումնասիրության մեջ ավելի մանրամասն կդիտարկենք Հիսուսի վերականգնող աշխատանքը: Նա ցանկանում է, որ մենք նույնպես հաստատուն հետևորդներ պատրաստվենք:

Լրացրո՛ւ հետևյալ առաջադրանքները: Երբ կպատասխանեք բոլոր հարցերին, կարող եք պատասխանները ստուգել բաժնի վերջում տրված պատասխաններով:

1. Հիսուսը մեզ համար ճանապարհ է պատրաստել, որ դառնանք հաստատուն հետևորդներ:
   Կարդա՛ հետևյալ համարները և գրի՛ր, թե Հիսուսն եկավ ինչ անել.

   - Մատթ. 9:13 բ, Ղուկ. 19:10 ______________________
   ____
   - Մատթ. 1:21 ______________________
   ____
   - Բ Կորնթ. 5 ______________________
   - Ա Հովհ. 3 ______________________
   ____

2. Հիսուսը եկավ մեզ փրկելու: Աստված Իր Որդուն, որպես փրկագին, տվեց մեր փրկության համար: Շնորհքն ու փրկությունը էժանագին ձևով չեն տրվում: Լրացրո՛ւ հետևյալ համարները՝

- Հռովմ. 5:8 *«Ապրված հայտնեց իր սերը մեզ սրանով* _____ _____»:
- Բ Կորնթ. 5:14 *«Վասնզի Քրիստոսի սերը սրիպում է մեզ, որ սա ենք միտք անում,* _____ _____»:
- Բ Կորնթ. 5:15 «Եվ ամենի համար մեռավ, որ կենդանի լինողները _____ _____»:

3. Պողոսը վկայում էր, որ Հիսուսի սերը նրան զորություն էր տալիս ապրելու Աստծո համար (Բ Կորնթ. 5:14):

- Ո՞րն է Հիսուսին հետևելու քո զորության աղբյուրը. _____ _____ _____:

4. Երբ Պողոսը հանդիպեց Հիսուսին, փոխվեց նրա ողջ կյանքը:

- Համաձայն Գ. Առ. 22:10–ի՝ ո՞րն էր նրա առաջին արձագանքը. _____ _____ _____

Նշումների համար

Նշումների համար

Հիսուս Քրիստոսը հանդիպեց Պողոսին, և Պողոսը հանձնեց իր կյանքը Նրան (Փիլիպ. 3:12 բ): Սա Պողոսի առաջին քայլն էր աշակերտության ճանապարհին:

- Ո՞րն է քո արձագանքը Աստծո սիրուն.

_____

_____

_____

5. Հիսուսի հանդեպ սիրուց մղված աշակերտը կկատարի այն **3 պահանջները**, որոնք նշված են Ղուկ.9:23–ում: Կարդա՛ այս համարը և լրացրո՛ւ բաց թողնվածը.

«Եթե մեկը կամենում է իմ ետևից գալ, թող _____ *և ամեն օր իր* _____ *և* _____*»:*

Այդ 3 պահանջներն են.

ա) _____:

բ) _____:

գ) _____:

6. Առաջին հերթին Հիսուսը խոսում է ***անձն ուրանալու*** մասին: Նա ուրացավ Իր Անձը: Կարդա՛ Փիլիպ. 2:5–8: Որո՞նք էին անձնուրացության մասնավոր հետևանքները Հիսուսի համար.

ա) _____:

բ) _____:

գ) _____:

դ) _____:

ե) _____:

Հիշի՛ր քո անձնական կյանքում այնպիսի ոլորտների մասին, որտեղ այսպիսի անձնուրացության կարիք կա: Գրի՛ր դրանք.

Նշումների համար

7. Հիսուսի նշած երկրորդ պահանջը ***խաչը վերցնելն է***: Սա չի նշանակում տարբեր խնդիրներով բեռնվել, այլ խոսում է մեր սեփական ընտրության մասին. արդյո՞ք կամենում ենք ընդունել Քրիստոսին հնազանդ լինելու գինը: Խաչը կրելուն մասնակից լինելը, առանց հետևանքներին կենտրոնանալու, այն ճանապարհով գնալն է, որը կամենում է Հիսուսը:

Ընդգծի՛ր այն գործողությունները, որոնք խաչը կրելու մասն են կազմում.

Սիրել թշնամիներին:	Ընկերանալ մարդկանց:
Ներել ուրիշներին:	Աղոթել:
Վրեժխնդիր լինել:	Վկայել:
Ներում խնդրել:	Վիճել:
Ստել:	Հալածվել:
Օգնել կարիքավորներին:	

Հաճախ մեզ թվում է, որ խաչը կրելը բացասական իմաստ ունի: Կարդա՛ Գ. Առ. 5:41, 42 և նկարագրի՛ր աշակերտների հետ կատարվածը խաչը տանելու առումով.

8. Կարդա՛ Ղուկ. 14:27: Որո՞նք են խաչը վերցնելը մերժելու հետևանքները.

Նշումների համար

9. Հիսուսը վերցրեց Իր խաչը: Կարդա՛ Եբր.12:2 և նկարագրի՛ր խաչը կրելու վերաբերյալ ***Հիսուսի դրդապատճառը.***

_____

_____

_____

Փիլիպ. 2:8–ում կարդում ենք, թե ինչպես դա կիրառեց Հիսուսը:
Լրացրո՛ւ.

«Իրեն _____ *և*

_____ *մինչև* _____*»:*

Հիսուսը հնազանդվեց իր Հոր կամքին, ընդհուպ մինչև խաչի մահ: Հիսուսի օրինակից կարող ենք սովորել, որ քրիստոնյայի խաչը ունի 2 առանձնահատկություն.

- Դա ազատ կամքով պատասխանատվություն վերցնելն է:
- Դա հնազանդության գործողություն է;

ա) Ինչո՞ւմն է կայանում մեր մեղքը, երբ ձախողվում ենք մեր խաչը վերցնելուց: Նշի՛ր.

- ❍ Անհնազանդություն:
- ❍ Անհավատարմություն:
- ❍ Անհավատություն:

բ) Ի՞նչ եք կարծում. ո՞րն է խաչը վերցնելու մեր ճիշտ շարժառիթը (Մատթ. 22:37–39, Եբր. 12:2)

_____

_____

10. Երրորդ պահանջը, որի մասին խոսում է Հիսուսը, ***Իրեն հետևելու*** մասին է: Հիսուսին հետևող աշակերտի շարժառիթը պետք է Տիրոջ նկատմամբ ունեցած սերը լինի: Կարդա՛ Ա Հովհ.2:6 և նկարագրի՛ր, թե ինչ է նշանակում հետևել Հիսուսին.

_____

_____

_____

11. Այնպես, ինչպես Հիսուսն էր հնազանդ Հորը, այնպես էլ մենք պետք է հնազանդ լինենք Նրան: Հիսուսին հետևելը շատ կարևոր է մեր հոգևոր կյանքի համար, քանի որ, այդպես մենք մնում ենք Նրանում, և ապրում՝ Նրա հետ փոխհարաբերվելով: Սա գործնական իմաստ ունի: Յուրաքանչյուր վանդակում նշի՛ր տվյալ համարին համապատասխանող Խոսքը (Խոսքը վերաբերում է աշակերտներին).

ա) ❑ Մատթ. 11:28	1) Տրվել է զորություն և իշխանություն:
բ) ❑ Ա Հովհ. 1:7	2) Կդառնան մարդկանց ձկնորսներ:
գ) ❑ Մարկ. 1:17	3) Հանգստություն կգտնեն Նրա մեջ:
դ) ❑ Հովհ. 14:7	4) Ծառայում են Քրիստոսին, երբ հետևում են նրան:
ե) ❑ Հովհ. 12:26	5) Սրբված են Հիսուսի արյունով:
զ) ❑ Հովհ. 8:32	6) Կճանաչեն ճշմարտությունը:
է) ❑ Դուկ. 9:1–2	7) Ճանաչում են Աստծուն անձնապես:

12. Վերոհիշյալ սուրբգրային համարները ներառում են հետևյալ օրհնությունները, որոնք Հիսուսին հետևելու արդյունք են.

- Ճշմարտության ճանաչում:
- Աստծո կամքի ճանաչողություն:
- Հանգիստ հոգու համար:
- Նրա գործն անելու զորություն:
- Հիսուսին ներկայացնելու իշխանություն:
- Մաքուր հաղորդակցություն:
- Անձնապես ճանաչել Հայր Աստծուն:

Այս օրհնություններից ամենաշատը որո՞նց կարիքը դու ունես հիմա: Բացատրի՛ր՝ ինչու...

_____

_____

_____

_____

Նշումների համար

Նշումների համար

13. Ղուկ. 9:24–ում Հիսուսը խոստանում է.

«Եթե ուրանաս քո անձը, վերցնես քո խաչը և հետևես Հիսուսին, ***քո կյանքը փրկված կլինի****»:*

Փրկված բառը նշանակում է *լինել* կամ *դառնալ ամբողջական:*

- Հովհաննես 12:24–25–ում Հիսուսը *ցորենի հատիկի* օրինակն է բերում: Ի՞նչ արդյունք է այն տալիս.

  _____

Հետևաբար, աշակերտության ճանապարհը ցորենի հատիկի ճանապարհն է: ***Դա նշանակում է կյանք, որը բազում պտուղներ է բերում:***

14. Սա այս դասի ամփոփումն է: Լրացրու բաց թողնված տեղերը.

- Հայր Աստված ինձ համար տվեց Իր Որդուն _____ մղված, որ փրկի ինձ մեղքի հետևանքներից և կյանքի համար նպատակ տա:
- Ուստի ես ուզում եմ կատարել այն 3 պահանջները, որ նշում է Հիսուսը.

ա) Ես ուզում եմ հանուն Հիսուսի... _____:

բ) Ես պատրաստ եմ վերցնել իմ... _____:

գ) Ես ուզում եմ լինել հնազանդ և ... _____ Հիսուսին:

- Ես ցանկանում եմ _____ Հիսուսին, Իր հանդեպ ունեցած _____ դրդված, սա է վերականգնման, պտղաբերության և հավերժական կյանքի ճանապարհը:

Բե՛ր այս ամփոփումը Աստծո առաջ աղոթքով և շնորհակալությո՛ւն հայտնիր Նրան, քանի որ Նա կիրականացնի այս ամենը քո կյանքում (Փիլիպ. 2:3):

Պատասխաններ

Նշումների համար

1. • Փնտրել և փրկել կորսված մեղավորներին:
   • Փրկել Իր ժողովրդին իրենց մեղքերի հետևանքներից:
   • Նա մեղավոր դարձավ, որպեսզի մենք արդարանանք:
   • Քանդել Սատանայի գործերը:

2. Տե՛ս Աստվածաշունչը:

3. Անձնական նկատառումներ:

4. • Նա հանձնեց իր կյանքը և ասաց. «Ի՞նչ անեմ, Տե՛ր»:
   • Անձնական նկատառումներ:

5. Իր անձն ուրանա..., վերցնի խաչը..., Իմ ետևից գա:
   ա) Անձը ուրանալ:
   բ) Վերցնել խաչը:
   գ) Հետևել Հիսուսին:

6. ա) Իր անձն ունայնացրեց:
   բ) Ծառայի կերպարանք առավ:
   գ) Մարդկանց նման եղավ:
   դ) Իրեն խոնարհեցրեց:
   ե) Հնազանդվեց:

   Անձնական նկատառումներ:

7. <u>Սիրել թշնամիներին:</u>
   <u>Ներել ուրիշներին:</u>
   Վրեժխնդիր լինել:
   <u>Ներում խնդրել:</u>
   Ստել:
   <u>Օգնել կարիքավորներին:</u>
   <u>Ընկերանալ մարդկանց:</u>
   <u>Աղոթել:</u>
   <u>Վկայել:</u>
   Վիճել:
   <u>Հալածվել:</u>

   Նրանք ուրախացան, որովհետև արժան համարեցին Նրա անվան համար չարչարվել ու անարգվել:

Նշումների համար

8. Դու չես կարող լինել Հիսուսի աշակերտը:

9. Հիսուսը վերցրեց Իր խաչը ուրախությամբ, քանի որ տեսնում էր այն ուրախությունը որ առջևում էր... խոնարհեցրեց..., հնազանդ եղավ..., ի մահ:

ա) Անհնազանդություն
բ) Անձնական նկատառում:

10. Մենք պետք է քայլենք ինչպես Հիսուսը:

11.

ա) 3	ե) 4
բ) 5	զ) 6
գ) 2	է) 1
դ) 7	

12. Անձնական նկատառում:

13. Այն շատ պտուղ է տալիս:

14.
- Սիրուց:
  ա) Իմ անձը ուրանալ:
  բ) Խաչը:
  գ) Հետևել:
- Հնազանդվել..., սիրուց: